ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 151-Ա

ք. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 19-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 60 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս 2025 թվականի նոյեմբերի 14-ին, 17-ին և 18-ին իրականացրել է «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից հեռարձակվող «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) 2025 թվականի նոյեմբերի 13-ից 17-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունների մշտադիտարկում, որի արդյունքում հայտնաբերել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի 3-րդ մասի, Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 73-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների (այսուհետ նաև՝ 73-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներ) 4-րդ կետի, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթների պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ:

Արդյունքում 2025 թվականի նոյեմբերի 19-ին Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից կազմվել է տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն):

Ըստ Արձանագրության՝

«(…) Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «…այ էս կենդանիների (ցույց է տալիս ԱԱԾ-ի աշխատակիցներին – լրացումը՝ մշտադիտարկողի) մասին եմ ուզում խոսեմ, որովհետև պարզ ա, որ Ալեն Սիմոնյանը գիշերային, էդ բանը, երազախաբ լինելու արդյունքում, զանգում ա ԱԱԾ-ի բանին ասում ա՝ դրանց բռնեք բերեք, բանը, ծեփեք, լփեք …»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «… Մեզ եք ուզում վախացնե՞ք, առռը՛ (երկու ձեռքերով ցույց է տալիս երեք մատի կոմբինացիա – լրացումը՝ մշտադիտարկողի) թե մենք կվախենանք…»,

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, – «… դուք պատկերացնում ե՞ք, ինքը վստահ է, որ անասնակերը կբերի, կկերցնի ու կմարսի, անասնակերը բերել»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան , – «եկեք բան անենք, հա, լինենք օբեկտիվ չէ, օբեկտիվ չէ, բան ճիշտը ծուռը նստենք, դուզը խոսանք. Նիկոլ ընտրած զանգվածին անասնակերը հասնում ա, որովհետև մենակ անասունը կարար չմտածելով ընտրեր Նիկոլ Փաշինյանին … այսինքն՝ էդ անասնակերը ձեր ընտրության արդյունքն է, ու դու՛ք՝ ընտրելով Նիկոլ Փաշինյանին, արժանի եք անասնակերի: Հիշե՛ք դա, ու հաջորդ անգամ ընտրություն կատարելիս՝ լավ մտածեք, ի՞նչ կեր են բերելու ձեր երեխեքի կոկորդը լցնեն»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «… ասում է Ադրբեջանի տարածքով անասնակեր է եկել մտել Հայաստանը: Դու անասուն չե՞ս, լսի՛: Լավ նիուժելի էս երկրում չկան մարդիկ, որ այդ ամեն ինչը հետևում են ու բան են անում գիտակցում են այդ քարոզչական մոմենտը, որ մեզ կոնկրետ, իրո՛ք անասունի տեղ դրած խաբում են»,

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, – «հիմա էջմիածնում, ո՛վ, որ գնա էդ Մեխակյանին ընտրի ո՞վ ա, ՔՊ-ին այդ մարդը ՔՊ հերոսի տղայա իրա հոր արևին, որ գնա դրան ընտրի»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «էն ինֆանտիլնի իդիո՞տը»,

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, – «հա իդիոտ էլ չի, չգիտեմ էլ ինչ ա, էն էլ ամեն օր ա թքում հոր գերեզմանի վրա: Դե հիմա չէ, եթե հիմա դուք Վաղարշապատում գնալու եք էսքանից հետո, որ ձեզ անասունի կեր են բերել … Հիմա սա է՝ ունենք այն, ինչ ունենք, այդ հաց են բերում, այս անասունի կեր են բերում, էն էլ թունավորված, հիշե՛ք վաղարշապատցիներ, ով գնալու է Նիկոլին ընտրի, Արմինեի ասած այդ անասնակերին դուք լավ արժանի եք, ուրեմն ձեզ հասնում է, որ դուք գնաք ու ուտեք …»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «… դրա տեղը բերում է չորրորդ կարգի ցորեն, որը կրկնում եմ տալիս են անասունին … կներեք էլի, դուք Նիկոլին լա՞վ եք հիշում, լատկեն քամակին խփած, այսինքն՝ … այ չմո՛, ախր մեր աչքի առաջ ես եղել է բարեկեցիկ երկրում, լինելով թերթի խմբագիր, մեկ՝ դու, մեկ՝ քո անլվա կնիկը …»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «… Այդ կոմբիկերը իրանց համար են բերել (ցուցադրվում է հատված Փաշինյանի ելույթի ժամանակ ծափահարող ժողովրդին - լրացումը՝ մշտադիտարկողի), հեսա կոմբիկերի սպառողները…»,

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, – «…նույն մարդիկ են, որ հիմա Վաղարշապատում էտ Մեխակյանին, Արգիշտի Մեխակյանին Վաղարշապատում չորս օր է մնացել, Արմինե՛, կտեսնենք, պատմությունը նույնն է…»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «… ա՛յ, ա՛յ կոմբիկերի ուղիղ սպառողը…, այսինքն՝ ինքը գիտի ում համար ինչ է բերում, այս մարդկանց ավել բան պետք չի):

(…) Հարկ է նշել, որ հաղորդման ընթացքում ներկայացվում է նաև սխալ տեղեկատվություն Ղազախստանից ներկրված ցորենի վերաբերյալ, մասնավորապես.

ժամը 14:48:55 - 14:49:18

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, – «… մեկ էլ հանկարծ ասում են անասունի կեր են բերել, էն էլ թունավորված, Արմինե՛»,

Հաղորդման հյուր՝ Արմինե Ադիբեկյան, – «դե դա արդեն թող սննդի անվտանգության մասնագետները դրանից խոսեն, որովհետև ես ոչ այդ ցորենն եմ տեսել, ոչ ցորենից գլուխ եմ հանում, որ հասկանամ թունավորված է, թե թունավորված չի»,

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, – «չէ, Ղազախստանից է եկել և Ղազախստանից այդ բաները թղթերով բացահայտված…»:

ժամը 14:58:50 - 14:59:05

Հաղորդավար՝ Անժելա Թովմասյան, - «… Հիմա սա է ունենք այն, ինչ ունենք, այդ հաց են բերում, այս անասունի կեր են բերում, էն էլ թունավորված …»:

Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2025 թվականի նոյեմբերի 19-ին կազմված Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի նոյեմբերի 19-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 60 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 20-ին թիվ Ե/04/04.1/935-25 գրությամբ ծանուցել է (այսուհետ՝ Ծանուցում) Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ որևէ պարզաբանում կամ բացատրություն չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողները պետք է ապահովեն ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում՝ սեղմ ժամկետում միևնույն հաղորդման, իսկ հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ այդ մասին իրազեկումը:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ «(…) անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00–06:00–ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը:»:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ, 9-րդ և 11-րդ, 12-րդ և 13-րդ մասերը սահմանում են՝

«8.Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9.Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

11.Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:

12.Ուղղակի դիտարկման միջոցով իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է Հեռարձակողին կամ օպերատորին:

13.Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Հեռարձակողը կամ օպերատորը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է դրանք ներկայացնել կարգավորող պետական մարմին:»:

Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի թիվ 73-Ն «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» որոշմամբ հաստատված չափորոշիչների

3-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում, ի թիվս այլնի, այն տեսալսողական հաղորդումները, որոնք պարունակում են գռեհկաբանություն և հայհոյախոսություն,

իսկ 4-րդ կետի համաձայն՝ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-06:00–ն ընկած ժամանակահատվածում:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՏԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը, հանդիսանալով տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ Հեռարձակող, պարտավոր է պահպանել օրենքներով սահմանված կարգավորող դրույթները:

Այսպես, քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2020 թվականից հանդիսանում է տեսալսողական մեդիածառայություն մատուցող՝ Հանձնաժողովի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 110-Ա որոշմամբ հեղինակազորված իրավաբանական անձ (հեղինակազորման վկայագրի սերիան, համարը՝ ՀՎ № 021):

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար:

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական

կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը սահմանում է.

«տեսալսողական տեղեկատվություն՝ հաճախականություններով և հնարավոր այլ տեխնիկական միջոցներով (հաղորդիչ, արբանյակ, մալուխային ցանց և այլն) սպառողներին տրամադրվող տեսալսողական նյութ, ներառյալ՝ տեսալսողական արտադրանքին զուգահեռ կամ տեսալսողական արտադրանքի կազմում հաղորդվող կամ տեսալսողական արտադրանքի միջոցով հասանելիություն ստացող լրացուցիչ տեսալսողական կամ տեքստային տեղեկատվությունը (ինտերակտիվ հեռուստատեսություն).»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը սահմանում է.

«տեսալսողական հաղորդում՝ տարածվող պատկերներ և (կամ) հնչյուններ պարունակող սահմանափակ տևողությամբ նյութ, որը կազմակերպական իմաստով ինքնուրույն և ավարտուն է և համարվում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքի օբյեկտ.»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը սահմանում է.

«հեղինակազորում՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում.»:

Օրենսդիրը սահմանել է հստակ հաջորդականություն կարգավորող պետական մարմնի գործողությունների համար, նաև Օրենքի կոնկրետ իրավական նորմ նշված իրավախախտման համար: Ավելին, պետք է նշենք, որ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցչի կողմից իրականացվող մշտադիտարկման պահին և արձանագրությունը կազմելու ժամանակ մշտադիտարկողն արձանագրել է տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող դրույթների խախտման հատկանիշներ:

Այսպես, Արձանագրության մեջ նշվել են բոլոր էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները: Հեռարձակողը Օրենքով սահմանված ժամկետում ստացել է Արձանագրության իր օրինակը, նրա լսված լինելու իրավունքը չի խախտվել, հնարավորություն է ունեցել իրականացվող դիտարկման վերաբերյալ հայտնելու առարկություններ: Արձանագրում ենք, որ Հեռարձակողը չի օգտվել Օրենքով իրեն վերապահված իրավունքից և Հանձնաժողովին չի ներկայացրել մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրության վերաբերյալ որևէ առարկություն կամ բացատրություն:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ևս անդրադարձ կա հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական դաստիարակության և այդ հարցերում պետության դերին՝ իրավաչափ համարելով կարգավորող մարմնի միջամտությունը խոսքի ազատությանը՝ ի շահ հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական և բնականոն զարգացման պաշտպանության:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ՄԱԿ, 1989թ.) դրույթներն արտացոլված են նաև «Երեխայի իրավունքների մասին» օրենքում: Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի վերջին պարբերությունը սահմանում է՝ արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

Այսպիսով, յուրաքանչյուր երեխայի իրավունքները և լավագույն շահի հետապնդումն ավելի վեր պետք է լինեն, քան որևէ վարկանիշային ֆիլմի կամ տեսալսողական այլ հաղորդման ցուցադրությունը, որը տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող յուրաքանչյուր ընկերության հավելյալ դիտողականություն և վարկանիշ կբերի: Ուստի յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում և ցանկացած ոչ իրավաչափ միջամտությունից, որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ վերջիններիս դաստիարակության, ինչպես նաև բարոյականության, համամարդկային արժեքների ընկալման նկատմամբ: Երեխայի լավագույն շահը, տեղեկատվական անվտանգությունը պետք է գերակա լինի խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ:

Միաժամանակ միջազգային պրակտիկան՝ ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, ՅՈՒՆԻՍԵՖ-ի լրագրողական ուղեցույցները և լրագրողական էթիկայի համընդհանուր սկզբունքները, միանշանակ հաստատում են, որ բոլոր դեպքերում առաջնահերթ պետք է պաշտպանված լինեն երեխաների լավագույն շահը, արժանապատվությունը, հոգեկան և ֆիզիկական անխաթար զարգացումը: Հանրային հետաքրքրությունը կամ հեռուստատեսային դիտելիությունը չեն կարող գերակա լինել երեխաների իրավունքների պաշտպանության նկատմամբ:

Հանձնաժողովն, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերը, ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Ընկերության Ծրագրի կողմից 2025 թվականի նոյեմբերի 13-ին հեռարձակված «Հայելի ակումբ» հաղորդումը (հաղորդման տևողություն՝ 14:33:31–15:22:38) պարունակել է գռեհկաբանություն, մասնավորապես՝

14:35:36-ին՝ *«(…) այ էս կենդանիների մասին եմ ուզում խոսեմ, որովհետև պարզ ա, որ Ալեն Սիմոնյանը գիշերային, էդ բանը, երազախաբ լինելու արդյունքում, զանգում ա ԱԱԾ-ի բանին ասում ա՝ դրանց բռնեք բերեք, բանը, ծեփեք, լփեք (…)»,*

14:40:24-ին՝ *«(…) Մեզ եք ուզում վախացնե՞ք, առռը՛* [երկու ձեռքերով ցույց է տալիս երեք մատի կոմբինացիա – լրացումը՝ մշտադիտարկողի] *թե մենք կվախենանք (…)»,*

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով վերոգրյալ փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ որոշակի ժամերին անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակման արգելքն, ըստ էության, կապված է հանրային շահի հետ, որը տվյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես, իր մեջ ներառում է անչափահասների առողջությունը, մտավոր ու ֆիզիկական զարգացման վրա հնարավոր բացասական ազդեցությունից պահպանումը: Սույն վարույթի համատեքստում խնդրո առարկան ոչ թե Ծրագրի այս կամ այն թողարկումն է, այլ կոնկրետ՝ ընթացիկ տարվա նոյեմբերի 13-ին հեռարձակված «Հայելի ակումբ» հաղորդման ժամը 14:33:31-ից 15:22:38-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված այն հատվածները, որոնցում տեղ է գտել վկայակոչված գռեհկաբանությունը:

Առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ մեդիայում առկա գռեհկաբանությունն ազդում է հասարակության, հատկապես անչափահասների տրամադրության, սպասումների և առհասարակ ապրելակերպի վրա, այնուամենայնիվ տեսալսողական մեդիածառայություն մատուցողները շարունակում են ցուցադրել այդպիսի հաղորդումներ: Ուստի անհրաժեշտ է մշակել և գործարկել մեխանիզմներ ժամանակակից աշխարհի՝ հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին զերծ պահելու համար:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է.

«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

«առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:»:

Հարկ է նաև նշել, որ վերոնշյալ հաղորդման ընթացքում ներկայացվել է նաև սխալ տեղեկատվություն Ղազախստանից ներկրված ցորենի վերաբերյալ, ինչի մասին Հանձնաժողովը հայտնել է Հեռարձակողին Ծանուցման մեջ:

Միևնույն ժամանակ արձանագրում ենք, որ հաղորդման ընթացքում Ղազախստանից ներկրված ցորենի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը և հերքվում է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից 2025 թվականի նոյեմբերի 13-ին հրապարակված պաշտոնական տեղեկատվությամբ, ըստ որի՝ Ղազախստանի Հանրապետությունից ներմուծված ցորենի խմբաքանակները ենթարկվել են բուսասանիտարական, անվտանգության և որակական փորձաքննությունների, որոնց արդյունքներով բուսասանիտարական և անվտանգության ցուցանիշների մասով շեղումներ չեն արձանագրվել:[1]

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«*Սույն օրենքի նպատակն է՝ ապահովել հավաստի տեղեկատվություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը»:*

Հավելենք, որ Հավաստի տեղեկատվության ապահովումը՝ որպես «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի հիմնարար պահանջ, բխում է և միաժամանակ ծառայում է Օրենքի հիմնական նպատակների իրականացմանը: Այն ամրապնդում է մեդիայի պատասխանատվության հիմնարար սկզբունքը, համաձայն որի՝ հասարակության կողմից վստահության արժանանալու դիմաց վերջիններս պարտավոր են գործել հաշվետու եղանակով՝ պատասխանատվություն կրելով տարածած բովանդակության որակի և ճշգրտության համար: Եվ սպառողը (դիտողը/ունկնդիրը) օրենքով երաշխավորված իրավունք ունի ստանալու ճշմարիտ, ամբողջական և չմոլորեցնող տեղեկություն:

Հեռարձակված ոչ հավաստի կամ սխալ տեղեկատվությունը կարող է վերածվել էական հասարակական վտանգի, որն առաջացնում է բազմաբնույթ ռիսկեր և վնասներ: Այսպես, օրինակ, անձինք կարող են մոլորվել և սխալ որոշումներ կայացնել կենսական նշանակություն ունեցող բնագավառներում, ինչն էլ կարող է ուղղակիորեն ազդել նրանց իրավունքների վրա:

Ուստի, Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված սխալի իրազեկումը հանդիսանում է հանրային տեղեկատվական միջավայրի վստահելիությունն ու անվտանգությունը պահպանող կարևոր մեխանիզմ: Սխալի ուղղումը ոչ միայն օրենքով սահմանված պարտադիր պահանջ է, այլ նաև անհրաժեշտ և արդյունավետ միջոց՝ ուղղված հասարակական վնասի կանխարգելմանը, անհատների իրավունքների պաշտպանությանն ու հանրային շահին

[1] https://snund.am/hy/page/news/1987/74

սպառնացող ռիսկերի նվազեցմանը: Վերոգրյալից հետևում է, որ հեռարձակվող տեղեկատվությունը պետք է լինի ճշգրիտ և ներկայացված ամբողջական համատեքստում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով Հեռարձակողը պարտավոր է ներկայացված տեղեկություններում սխալների առկայության դեպքում հնարավորինս կարճ ժամկետում տեղեկացնել այդ մասին՝ նույն հաղորդման ընթացքում, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ այլ հաղորդման ժամանակ:

Սակայն, նշված օրենսդրական պահանջը Հեռարձակողի կողմից չի կատարվել, այդ թվում՝ նույնիսկ Հանձնաժողովի կողմից համապատասխան Ծանուցումը ստանալուց հետո:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասը սահմանում է՝

«Սույն օրենքի 7-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.
2) տուգանք.
3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 15-րդ, 18-րդ և 23-րդ կետերը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 9-րդ հոդվածի 3-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ, 9-րդ, 11-րդ,12-րդ, 13-րդ, և 18-րդ մասերը, Հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 28-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 73-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և ղեկավարվելով Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ և 18-րդ մասերի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 18-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 19
ք.Երևան